ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 26 մայիսի 2000 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերջին զանգի առիթով իր հայրապետական օրհնությունը և պատգամն է հղել Հայաստանի բոլոր շրջանավարտներին:

Միրելի շրջանավարտներ, սիրասուն զավակներ մեր.

Բերկրանքով ու խինդով եք լեցուն այսօր բոլորդ, գեղեցկատես՝ ձեր հույսերով ու լավատեսությամբ, ամբարած արդյունքները նվիրյալ այն ջանքերի ու սիրո, որ ներդրել են ձեր սիրելի ուսուցիչները, փասը փարիներ ուսուցանելով ու կրթելով, դեպի հիշարժան այս օրը առաջնորդելով ձեզ: Նրանց շնորհակալ գործը մշտապես ձեր ուղեկիցն է լինելու, ինչպես և հարազատ դպրոցի կարոտը, որ, վստահաբար, արդեն իսկ անթեղում եք երիտասարդական ավյունով խայտացող ձեր հոգիներում:

Մարդկային կյանքի առաջին կարոտներից է դպրոցի հանդեպ կարոտը, որը, թանկ մանկության ու պատանեկության հուշերով, ընտանիքի, հարազատ բակի ու ծննդավայրի ջերմության հետ անբաժան մասն է դառնում առ հայրենին մեր ունեցած մեծ սիրո: Աստվածպարգև է Հայրենիքը, երկնաշնորհ: Երջանիկ եք դուք, սիրելի շրջանավարտներ, որ հասակ եք առել անկախ Հայաստանում, սնուցվել ազատության շնչով, հավատի և հայրենյաց ավանդների վերարժևորմամբ: Պատմությունից ձեզ հայտնի է, թե որքան կարևորել են մեր նախնիք մեր երկրի ազատությունն ու անկախությունը, որքան արյուն հեղել, ջանք թափել՝ կորցնելուց հետո այն վերագտնելու համար: Այո, հոգսաշատ են այսօր մեր Հայրենիքն ու ժողովուրդը, սակայն ազատությունն է այն արժեքը, որ պայման է դառնում արարումների, բարգավաճման ու բարօրության: Կեղծիքից, ստրկամտությունից, անգիտությունից ազատ ձեր հոգու սլացքներով է կերտվելու նվիրական մեր Հայրենիքի այսօրն ու գալիքը: Դուք թանկարժեք, ոսկեղեն հունձքն եք մեր, որ խտացրած ազատության մեր արեգակի հորդավառ լույսը, հայության նվիրական իդեաների կենսավորումով պտղավորելու եք ազգային մեր կյանքը: Վստահ քայլեք ձեր ճանապարհով, կրեք ձեր կարևորության գիտակցությունը, շիտակ, աներկբա ու անվախ ստանձնեք ձեր բաժին պատասխանատվությունը: Ձեր ջանադիր, անխոնջ, ստեղծարար աշխատանքով, ձեր հոգու ջերմությամբ ու ձեռաց գործերով իմաստավորեք ու գեղեցկացրեք ձեր ու ձեր հարազատների, մեր ժողովրդի կյանքը, մեր մայր հողն ու երկիրը: Հավատարմությամբ ծառայեք մեր հայրերի Աստծուն, զորացեք հավատքով, հինավուրց մեր պատմությամբ ու մշակույթով, աղոթախոս անցեք կյանքի ձեր ուղին:

Հայրական սիրով շնորհավորում և ողջունում ենք ձեզ շրջանավարտ դառնալու փոնական առիթով, բերում ամենքիդ Հայրապետական Մեր օրհնությունը և ամենաբարի մաղթանքները: Թող Բարձրյալն Աստված շնորհազարդի ձեզ և առաջնորդի նորափթիթ կյանքի ձեր ճանապարհը՝ Իր հանապազ օրհնությամբ Մայր Հայրենիքի խաղաղ երկնքի ներքո պարգևելով Ձեզ բարիք, երջանկություն, ազնիվ ու բարի նպատակների իրականացում և ամենայն հաջողություններ:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամենեսեան. ամէն»:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ